Հ. Լ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

# ԲԱԲԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

*XIX դ. առաջին կեսին Իրանը սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամ էր ապրում։ Քաղաքական տեսակետից այդ ճգնաժամն արտահայտվում էր օտարերկրյա պետություններից և, ամենից առաջ, Անգլիայից ու ցարական Ռուսաստանից նրա կախյալ վիճակով։*

*XIX դ. երկրորդ քառորդից սկսած Իրանի տնտեսական կյանքում տեղի են ունենում մեծ փոփոխություններ։ 1801 թ. Անգլիայի և Իրանի միջև կնքված քաղաքական ու տնտեսական պայմանագրի համաձայն անգլիական ու հնդկական առևտրականներին իրավունք էր վերապահվում ազատ բնակություն հաստատել Իրանի հարավային բոլոր նավահանգիստներում և առանց մաքսի Իրան ներմուծել անգլիական արդյունաբերական ապրանքներ։*

*Երկրի տնտեսության համար ոչ պակաս կործանարար էին նաև ռուս-իրանական երկու պատերազմները, որոնք ի հայտ բերեցին Իրանի հասարակարգի ողջ սնանկությունը։ 1828 թ. կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրի համաձայն Իրանը Ռուսաստանին պետք է վճարեր մոտ 20 միլիոն ոսկի ռուբլի ռազմատուգանք, որը, բնականաբար, պետք է իրականացվեր ժողովրդի կեղեքումն ուժեղացնելու, նրա վրա արտակարգ հարկեր և այլ գանձումներ նշանակելու միջոցով։ Մյուս կողմից, պատերազմում տարած հաղթանակը ռուսական առևտրական կապիտալի համար լայն դռներ էր բացում իրանական շուկայում։*

*Անիրավահավասար պայմանագրերը, ինչպես նաև կապիտուլյացիոն իրավունքի հաստատումն Իրանում բարենպաստ պայմաններ ստեղծեցին օտարերկրյա կապիտալի ներթափանցման համար, որի հետևանքով երկիրը, փաստորեն, վերածվեց արևմտաեվրոպական երկրների վաճառահանման շուկայի։*

*Ընդգրկվելով համաշխարհային շուկայի ոլորտը, Իրանն ընդարձակեց իր արտահանումներն ու ներմուծումները։ Սակայն դա կրում էր*

գաղութային առևտրի բնույթ, քանի որ ներմուծումը մի քանի անգամ ավելի էր արտահանումից և դրա հետևանքով քայքայվում էին երկրի արհեստները։ Այս ամենը բացասաբար անդրադառնալով Իրանի սոցիալ-քաղաքական դրության վրա, խոչընդոտում էր նրա զարգացումը։

Ինչպես գրում է իրանցի պատմաբան Ս. Մալեքզադեն, «Իրանի ժողովուրդը չէր կարողանում իր բնական ու հանքային հարստություններից օգտվել և ստիպված էր օտար երկրներից ներմուծել այն ամենը, ինչ ինքն ուներ։ Օտար պետությունների ազդեցության ու բռնության հետևանքով Իրանի ժողովուրդը նստած էր իր երկրի ընդերքում թաքնված գանձերի վրա և մահանում էր սովից»[1]։

Օտարերկրյա հյուպատոսները չարաշահելով իրենց արտոնյալ իրավունքները, միջամտում էին երկրի ներքին գործերին. հաճախ նրանց առաջարկով և պահանջով նշանակվում կամ հեռացվում էին նահանգապետներ կամ այլ պաշտոնյաներ։ Այդպիսով, Իրանի կենտրոնական կառավարությունը հեղինակազրկվում էր և գրեթե կորցնում իր իշխանությունը գավառներում։ Քոչվոր ցեղերը մայրուղիներում թալանում էին ճանապարհորդներին, կողոպտում քարավանները։ Օգտվելով երկրում տիրող քաոսային վիճակից, շահի զինվորները նույնպես զբաղվում էին կողոպուտով։ Գյուղի բնակիչները նկատելով զինվորների մոտալուտ գալուստը, հավաքում էին իրենց ունեցվածքը և դիմում փախուստի։

Նման վիճակում էին նաև երկրի առանձին կալվածատերեր և առևտրականներ, որոնք չունեին անձի և ունեցվածքի ապահովություն։

Երկրի բարձրաստիճան հոգևորականությունը ևս հոգևոր դատարանների միջոցով, քաղաքացիական գործերը «կարգավորելու» պատրվակով կողոպտում էր ժողովրդին։ Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսին հսկայական չափեր ընդունած կամայականությունն ու թալանը երկիրը հասցրել էին քայքայման եզրին։

XIX դ. կեսերին Իրանում ծայր առան գյուղացիական մի շարք շարժումներ, որոնք անմիջականորեն ուղղված էին ինչպես ներքին շահագործողների, այնպես էլ օտարերկրյա գաղութարարների դեմ։

Ապստամբությունները, որ տեղի էին ունենում Իրանի տարբեր վայրերում, արդեն 40-ական թվականների վերջերին բռնկվեցին նոր ուժով՝ ընդգրկելով նորանոր շրջաններ։ Զանջանում 1847 թ. աղբյուրները նշում են այդպիսի մի ապստամբություն։ Այդ խռովության անմիջական պատ-

[1] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران، ۱۳۳۸، ص ۴۱

ճառը Զանջանի հաքեմ Աշրաֆ խանի կամայականություններն էին, որի դեմ ոտքի ելած քաղաքի չքավոր խավը հարձակվում է քաղաքապետի տան վրա և ավերում այն[2]։

Նման խռովությունների ու հակաֆեոդալական պոռթկումների բազմաթիվ վկայություններ կան իրանական և եվրոպական սկզբնաղբյուրներում, որոնք ապացուցում են, որ ժողովրդական շարժումները ավելի ու ավելի մեծ չափեր ընդունելով, ամենուրեք հող էին նախապատրաստում համաժողովրդական խռովության համար։

Այդ կապակցությամբ հետաքրքիր է Թավրիզում ռուսական գլխավոր հյուպատոս Ն. Ա. Անիչկովի 1850 թ. փետրվարի 20-ի հաղորդումը Թավրիզի շրջակա գյուղերի գյուղացիական խռովությունների վերաբերյալ։

«Երեկ Թավրիզում խռովություն էր բռնկվել, որը մասամբ շարունակվում է և այսօր։ Ջեբիսթար բնակավայրի բերքը մորեխների ներխուժման հետևանքով ոչնչացել է։ Բնակիչները 45 վերստ հեռավորությունից եկել և խնդրել էին, որպեսզի այս տարի զիջում կատարվի նրանցից գանձվող հարկի ընդհանուր գումարում։ Սկզբում նրանք դիմեցին բարձր հոգևորականությանը, իսկ հետո ինձ՝ խնդրելով իմ միջնորդությունը սանձելու այն զինվորների գործողությունները, որոնք ուղարկված լինելով հարկահավաքի և տեղական իշխանությունների ուժեղացման համար տեղի էին տալիս սանձարձակությունների ու կամայականությունների, առևանգում էին նրանց կանանց։ Քաղաքում անդորրը պաշտպանելու նպատակով ես չհրաժարվեցի նրանց բողոքը հասցնել իշխանություններին, սակայն իմ միջնորդությունը նրանց չբավարարեց։ Թավրիզի վեզիրը առավել երկյուղ է կրում զիջում կատարել Ջեբիսթարի բնակչությանը, որովհետև ներկայումս նման վիճակում է Ադրբեջանի շրջանների մի մասը։ Մորեխը լրիվ ոչնչացրել է Ուրմիայի, Խոյի և Սալմաստի հացահատիկը, ուստի որևէ բնակավայրում հարկերի զիջումը Թավրիզի իշխանություններին կհարկադրի այդ վայրերում նույնպես զիջումներ անել»[3]։

XIX դ. առաջին կեսին Իրանում ծավալված ապստամբություններից ամենակարևորը և նշանակալիցը 1848—1851 թթ. բաբիական ապստամբությունն է։

Իրանի տնտեսական խոր անկման պատճառով քայքայված հազարավոր արհեստավորներ, տնայնագործներ, մանր և միջին առևտրա-

---

[2] كتاب نقطة الكاف فى تاريخ بابيه- ص ١٣٠

[3] АВПР, Фонд Канцелярия, д. 1, л. 4—5.

կաններ հանդիսացան դժգոհ զանգվածների համընդհանուր շարժիչ ուժը։ Մուսուլմանական ցածրաստիճան հոգևորականությունը ևս, հակառակ հոգևորական բարձր խավի՝ մոջթահեդների, ամենուրեք ներգըրավվեց երկրում ծավալվող շարժումների մեջ։ Ցածրաստիճան հոգևորականության հակաֆեոդալական տրամադրությունների ակունքը պետք է փնտրել նրա սոցիալական ծագման մեջ։ Քանի որ այդ խավը իր սոցիալական դրությամբ չէր տարբերվում ժողովրդական զանգվածներից, նրա ներկայացուցիչները և գոյությունը պահպանելու համար զբաղվում էին հողագործությամբ, մանր առևտրով և արհեստով։

Ինչպես և այլ կրոններում, այնպես էլ մահմեդականության մեջ կրոնական աղանդները սոցիալական հակասությունների արդյունք էին։ Պատահական չէ, որ աղանդավորական շարժումները տեղի են ունենում սոցիալ-տնտեսական սուր ցնցումների և ճգնաժամերի ժամանակ։ Վ. Ի. Լենինը գրում է, որ «...կրոնական կեղևի տակ քաղաքական բողոքի հանդես գալը մի երևույթ է, որը զարգացման որոշ աստիճանի վրա հատուկ է բոլոր ժողովուրդներին...»[4]։

Բաբիական շարժումը, որը ծավալվեց XIX դ. 40-ական թվականներին, աճեց և զարգացավ երկրում առաջացած սոցիալ-տնտեսական սուր ճգնաժամի հետևանքով, դառնալով անցյալ դարում Իրանի ամենախոշոր շարժումներից մեկը։ Այդ շարժմանը մասնակցում էին գյուղացիությունը, քաղաքային չքավոր խավի՝ արհեստավորների, մանր առևտրականների ու ստորին հոգևորականության մի մասը, որի շնորհիվ այն ստացավ հակաֆեոդալական և հակագաղութային զորեղ բնույթ։

Այդ ժամանակաշրջանի դասակարգային գոտեմարտերը կանխորոշեցին Իրանի հետագա պատմության զարգացման ուղին, ընդհուպ մինչև 1905—1911 թթ. բուրժուա-սահմանադրական հեղափոխությունը։

Ըստ շիաների դավանության, նրանց տասներկուերորդ էմամը (փրկիչ Մեհդին) «անհայտացել» է IX դ. վերջին։ Շիաների ուսմունքի համաձայն Մեհդիի գալուստը պետք է անարդարությամբ և չարությամբ հեղեղված երկրում հաստատեր արդարություն և ճշմարտություն։ Բացի այդ, նա պետք է մաքրագործեր իսլամը։ Վերջին հազարամյակում մուսուլմանական աշխարհում արդեն ի հայտ էին եկել առանձին անհատներ, որոնք «Մեհդի» իրենց հռչակելով, հակապետական ծավալուն պայքար էին մղում իշխանությունների դեմ[5]։

---

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 288։

[5] بررسی و محکمه در تاریخ عقاید و احکام باب و بهاء، تهران، ۱۹۵۵، جلد اول، ص. ۳۶

*Եվ ահա XIX դ. 40-ական թվականներին հանդես եկավ մի նոր «Մեհդի», որի ուսմունքի քողի տակ ծավալվեց հսկայական մի շարժում։ Այդ շարժումը հայտնի է նրա ղեկավար սեյեդ Ալի Մոհամմադ Բաբի անունով։*

*Սեյեդ Ալի Մոհամմադը ծնվել է 1820 թ. Շիրազ քաղաքում, բամբակե գործվածքների մանր առևտրականի ընտանիքում*[6]*։ Դեռ մանուկ հասակում զրկվելով հորից, նա դաստիարակություն է ստանում իր մորեղբոր՝ հաջի սեյեդ Ալիի մոտ։ Շիրազում սկզբնական կրթությունը ստանալուց հետո, 18-ամյա սեյեդ Ալին մորեղբոր հետ մեկնում է Բանդար-Բուշեհր և այնտեղ զբաղվում առևտրով։*

*Արդեն այդ տարիներին մենակյաց կյանք վարելով, նա հորինում էր կրոնական այաթներ*[7]*, ուսումնասիրում քիմիա և այլն*[8]*։*

*Հինգ տարի անց նա մեկնում է շիաների սրբավայր Քարբելա և Նաջաֆ։ Քարբելայում սեյեդ Ալի Մոհամմադը երեք ամիս հաճախում է շեյխերի դավանանքի առաջնորդ սեյեդ Քազեմ Ռաշտեցու քարոզներին։ Յուրացնելով շեյխական ուսմունքը, նա Իրաքում ծավալում է քարոզչական գործունեություն, որի հետևանքով առժամանակ բանտարկվում է օսմանյան իշխանությունների կողմից*[9]*։ Սեյեդ Քազեմի մահից հետո 1848 թ. նա վերադառնում է Իրան և բնակվում իր ծննդավայր Շիրազում։*

*1844 թ. մայիսին սեյեդ Ալի Մոհամմադը հայտարարում է, որ ինքը սեյեդ Քազեմի նախագուշակած անձն է և իրեն հռչակում է «Բաբ», այսինքն՝ «դուռ», որի միջոցով կապ է պահպանվելու Մեհդիի հետ և աշխարհ է ներթափանցելու արդարությունը։ Այդ տարիներին սեյեդ Ալի Մոհամմադը գրում է «Մեկնաբանություն Հովսեփի սուրայի մասին» (تفسیر سوره یوسف), «Ահսան օլ Ղասաս» (احسن القصص), «Մեկնաբանություն Քոսար սուրայի մասին (تفسیر سورة کوثر) խորագրերով աշխատությունները։ Աքսորվելով Սպահան, նա գրում է «Մեկնաբանություն վա ալ ասր սուրայի մասին» (تفسیر سورة و العصر) գիրքը։*

*Պետք է նշել, որ նա այդ երեք աշխատություններում չի շեղվում Ղորանի դրույթներից և հարազատ է մնում իսլամի ուսմունքին։ Բացի նշված աշխատություններից, նրա գրչին են պատկանում նաև բազմաթիվ կրոնական քարոզներ։*

---

[6] مقاله شخصی سیاح که در قضیهٔ باب نوشته است، ص ۲

[7] بررسی و محاکمه در تاریخ عقاید و احکام باب و بهاء، ص ۲۸

[8] *Նույն տեղում, էջ 118։*

[9] *Lady Sheil,* Glimpses of life and manners in Persia, London, 1856, p. 177.

Շուտով սեյեդ Ալի Մոհամմադի համբավը տարածվեց որպես «Բաբ», նրա հիշյալ աշխատությունները պրոպագանդվեցին նրա աշակերտների կողմից և ամենուրեք սկսեցին խոսել Մեհդիի մոտալուտ գալըստյան մասին։

1844 թ. վերջերին Բաբն իր մերձավոր հետևորդների՝ բարֆրուշեցի հաջի Մոհամմադ Ալիի (որը հետագայում դարձավ Մազանդարանի ապըստամբության առաջնորդը) և հաջի Սոլեյման խանի հետ ուխտագնացություն է կատարում Մաքքե, իսկ մեկ տարի անց՝ վերադառնում Բանդար-Բուշեհր։

Նահանգապետ Հոսեյն խանի կարգադրությամբ Բանդար Բուշեհրում Բաբը ձերբակալվում է և տեղափոխվում Շիրազ։ Սկզբում նա տնային կալանքի տակ է պահվում իր մորեղբայր հաջի Սեյեդի տանը, սակայն կարողանում է կապ պահպանել համախոհների հետ։ Հակառակորդներն այդ մասին իմանալով, հարձակվում են Բաբի տան վրա ու ավերում են այն, որից հետո նրան տեղափոխում են քաղաքապետ Աբդոլ Համիդ խանի տունը[10]։

Այդ հալածանքներն ավելի են գրգռում Բաբի հետևորդներին, որոնք ավելի համարձակորեն սկսեցին քարոզել նրա վարդապետությունը։

Շահական իշխանությունների և շիա բարձր հոգևորականության պահանջով, մոջթահեդների և Բաբի միջև կազմակերպվում է հրապարակային բանավեճ, որը տեղի է ունենում 1848 թ. սեպտեմբերին։ Բանավեճին իշխանությունների կողմից ներկա էր Բաբի հետագա համախոհ սեյեդ Յահյա Դարաբին։ Բանավեճն ավարտվում է նրանով, որ Բաբին համարում են խենթ և ճիպոտահարում։ Նման հանդիպումների և բանավեճերի շնորհիվ սեյեդ Յահյան դառնում է Բաբի ամենանվիրված հետևորդներից մեկը[11]։

Սպահանի նահանգապետ Մանուչեհր խանը, որն անձամբ համակրում էր Բաբին, մտադրվում է մի ժողով հրավիրել, որտեղ շիա հոգևորբարձր խավը և Բաբը պետք է քննարկեին վիճելի հարցերը։ Սակայն, ինչպես վկայում են աղբյուրները, մոջթահեդների հրաժարման պատճառով այդ բանավեճը տեղի չի ունենում[12] և նրանց պահանջով էմամ Ջոմեն[13] Բաբին հեռացնում է իր տնից։

---

10 كتاب نقطة الكاف، ص ١١٣

11 مقاله شخصی سیاح، ص ١٠

12 كتاب نقطة الكاف، ص ١١٨

13 Քաղաքի գլխավոր հոգևոր դեմքը, որն ուրբաթ օրերին մզկիթում աղոթք է կատարում։

Մանուչեհր խանը Բաբին տեղափոխում է իր տուն և, նույնիսկ, նամակ է գրում շահին, խնդրելով չհետապնդել Բաբին[14]։

1847 թ. փետրվարին Մանուչեհր խանի մահից հետո մայրաքաղաքից կարգադրություն է ստացվում, Բաբին հսկողության տակ վերցնելու և Թեհրան ուղարկելու մասին։ Սակայն շուտով որոշվում է Բաբին անմիջապես տեղափոխել Մաքուի ամրոցը։

Այդ ժամանակ, արդեն, Բաբի հետևորդների ջանքերով նրա վարդապետությունը և քարոզները մեծ տարածում էին գտել ամբողջ երկրում։ Անախորժություններից խուսափելու համար իշխանությունները կարգադրում են նրան զարտուղի ճանապարհով հասցնել Մաքու։ Ամենուրեք, որտեղից անցնում էր Բաբը, ժողովուրդն արժանավայել էր դիմավորում նրան։ Օրինակ, Զանջանի քաղաքապետը, ժողովրդական շարժումից վախենալով, Բաբի պահակներին կարգադրում է նրան անմիջապես հեռացնել քաղաքի արվարձաններից, որտեղ նրանք որոշել էին իջևանել[15]։

Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, եղել են դեպքեր, երբ ամբողջ գյուղերի բնակիչները դարձել են բաբիներ[16]։

Բաբի աքսոր տանող երթուղու վրա գտնվող քաղաքների և գյուղերի բնակչության մեծ մասը դառնում են նրա ուսմունքի համակիրներ։

Իշխանությունների կարգադրությամբ, Մաքվում Բաբը պետք է բանտարկվեր սարի գագաթին գտնվող բերդում։ Սակայն այդ միջոցով էլ իշխանությունները չկարողացան լրիվ մեկուսացնել Բաբին և նա շարունակում էր կապ պահպանել իր համախոհների հետ։ 1847 թ. այդ աքսորավայրում Բաբը գրեց «Բայան» («Հայտնություն») աշխատությունը, որը հանդիսանում է բաբիական աղանդի սուրբ գիրքը և, ըստ Բաբի, պետք է փոխարիներ Ղորանին։

Իրանի և Ռուսաստանի սահմանագծում Բաբի լայն ժողովրդականությունը սարսափ է առաջացնում ցարական իշխանությունների մեջ։ Ռուսական դեսպան Դոլգորուկին Իրանի կառավարությունից պահանջում է Բաբին տեղափոխել երկրի խորքերը[17]։

1848 թ. սկզբներին Հաջի Աղասիի կարգադրությամբ Բաբին տեղափոխում են Ուրմիայից ոչ հեռու Չեհրիգ ամրոցը, ապա հետաքննության համար՝ Թավրիզ։

---

14 Tarikh-i-Jadid, p. 402.

15 كتاب نقطة الكاف، ص ۱۲۷

16 Նույն տեղում։

17 АВПР, Фонд. Канцелярия, д. № 178, л. 360.

Թավրիզի դատավարության ժամանակ Բաբն իրեն հռչակում է շիական տասներկուերորդ իմամ։

Դատավարությունը տևում է երկու օր, որից հետո Բաբին կրկին տեղափոխում են Չեհրիգ ամրոցը[18]։

Իրանական իշխանությունները վախենալով բաբիականության տարածման հետևանքներից, 1850 թ. կեսերին Բաբին տեղափոխում են Թավրիզ և գնդակահարում։

Ինչ դրույթներ է առաջադրում Բաբի ուսմունքը։ Դրանք շարադրված են հատկապես նրա «Բայան» գրքում։ Այստեղ նա հայտարարում է, որ Ղորանի օրենքները հնացել են և պետք է փոխարինվեն նոր օրենքներով։

Իր ուսմունքի տարածման համար Բաբը ստեղծում է յուրահատուկ մի միություն, որը կոչում էր «Միասնություն»։ Նրա մերձավոր աշակերտներից 19-ը մտնում էին այդ միության մեջ։

Բաբից հետո միության ճանաչված անդամներից էին Մոհամմադ Ալի բարֆրուշեցին, մոլլա Հոսեյն Բուշրույին, միրզա Յահյան, որը հետագայում վերանվանվեց Սոբհե Ազալի։ Այդ միության մեջ մտնում էին նաև կին բանաստեղծ Ղորրաթ օլ Այնը, Բահա օլլահը, Զանջանի ապստամբության առաջնորդ մոլլա Մոհամմադ Ալին և ուրիշներ։

Բաբն իր կրոնական ուսմունքի մեջ նոր, արտակարգ դրույթներ չի առաջարկել։ Նրա ուսմունքի գրեթե բոլոր դրույթները փոխառված են մինչ այդ հայտնի կրոնական ուսմունքից, հատկապես շեյխիներից։ Մեր կարծիքով, ամենակարևոր գործոնը, որը նպաստեց նրա ուսմունքի տարածմանը, Իրանի գյուղացիության, արհեստավորների և ցածրաստիճան հոգևորականության սոցիալական ծայրահեղ ընչազրկությունն էր։ Բաբիզմը հանդես էր գալիս ընդդեմ ֆեոդալական կարգերի և առաջարկում էր վերանայել Ղորանը։ Նա պահանջում էր երկրից վտարել ոչ բաբիներին, որպեսզի իրենք կարողանան օգտվել աշխարհի բարիքներից և ապրել եղբայրաբար։

Բաբի վարդապետությունը արտացոլում էր Իրանի ժողովրդի տարբեր զանգվածների իղձերը։

---

[18] Ինչպես կարդում ենք «Ստուգում ուսումնասիրություն Բաբի և Բահայի դավանանքի և կրոնական կարգագրեր» գրքում, Բաբը Թավրիզի դատավարության ժամանակ իր ձեռագրով և ստորագրությամբ գրում է մեղայագիր, որը գրանցված է և պահպանվում է իրանական Մեջլիսի արխիվում։ Տե՛ս بررسی و محکمه در تاریخ عقاید و احکام باب و بهائیه جلد دوم، ص ۸۰։ Սա, հավանաբար, նրա թշնամիների հորինած գրպարտանքն է ժողովրդական մասսաների աչքում նրան նսեմացնելու նպատակով։



7—814

*Մարդկային հասարակության զարգացման վերաբերյալ բաբիզմն առաջ էր քաշում հետևյալ դրույթը. դարաշրջանները մարդկության գոյության մշտապես զարգացող և կատարելագործվող փուլերն են։ Քանի որ հաջորդող դարաշրջանը գերազանցում է նախորդին, ապա իր դարն ապրած հասարակական կարգերը և օրենքները, դրանց հետ միասին նաև տվյալ դարաշրջանի մարգարեներն ու իրենց սուրբ գրքերը, կորցնում են արժեքը և փոխարինվում ավելի առաջադեմ մարգարեներով ու սուրբ գրքերով։*

*Սակայն, ըստ Բաբի, մարդիկ անկարող են ինքնուրույն, առանց աստծու օգնության, այնպիսի օրենքներ ու կարգեր սահմանել, որոնք խսկությամբ համապատասխանեին նրանց զարգացման մակարդակին։ Դա կատարվում է մարդարևների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է աստծու էության արտացոլման միջոց։*

*Այսպիսով, համաձայն Բաբի վարդապետության, յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է իր մարգարեն, որի միջոցով մարդկությանն է հասել աստվածային կամքը։*

*«Այժմ Մոհամմադի գալուստից անցել է ավելի քան հազար տարի, —գրում է Բաբը,—և մարդկային հասարակության զարգացման ուղին բավականաչափ առաջ է անցել։ Ղորանի օրենքները հնացել են և այլևս չեն բավարարում ժամանակի պահանջները։ Իշխանությունը գտնվում է մոջթահեդների և նահանգապետերի ձեռքում, որոնք երբևիցե հոգ չեն տանում ժողովրդի բարեկեցության մասին։ Նրանք պահպանում են միայն կրոնական օրենքների ձևական կողմը և դրա միջոցով հարստություն դիզում»*[19]։

*Բաբիզմի սոցիալական բնույթը իր արտահայտությունն է գտել Բաբի պատվիրաններում։ Իր «Բայան» աշխատության 3-րդ գլխի 7-րդ ենթագլխում նա գրում է բոլոր պարտքերը մարելու անհրաժեշտության մասին։ Իսկ 8-րդ գլխի 10-րդ ենթագլխի 5-րդ մասում առ ու ծախը թույլատրելի է համարում բոլորի՝ անգամ անչափահասների ու գնված գերիների համար։ Այդ պատվիրանում նա թույլատրելի է հայտարարում նաև վաշխառությունը։ Մի այլ պատվիրանում Բաբը իր հետևորդներին հանձնարարում է արգելել ոչ բաբիների բնակությունը բաբիների երկրում և այնտեղ թույլատրելի է համարում ապրելու միայն նրանց, ովքեր զբաղվում են օգտավետ առևտրով*[20]։ *Նշված պատվիրաններում*

---

[19] بيان الباب التالع و العشرين الواحد الخامس

[20] بيان الباب الساس و العشرين الواحد السايع

ակնհայտ է Բաբի համակրանքը առևտրական դասի նկատմամբ։ Մի այլ պատվիրանում նա կարգադրում է բռնագրավել ոչբաբիականների ամբողջ ունեցվածքը և այն բաժանել բաբիների միջև[21]։

Իր հետևորդների համար Բաբը մշտական բնակավայր է նշանակում Իրանի կարևոր հինգ նահանգները՝ Մազանդարանը, Խորասանը, Ֆարսը, Ադրբեջանը և իրանական Իրաքը, որտեղ, ըստ նրա, պետք է ստեղծվի արդարության սրբազան թագավորություն[22]։

Նշված պատվիրաններում արտացոլված են Բաբի առաջադրած կարևորագույն դրույթները։ Բացի առևտրական դասի վերաբերյալ առաջադրած դրույթներից, նրա մյուս գաղափարները, ինչպես նշեցինք, եղել են նախորդող տարբեր կրոնական աղանդների ուսմունքներում։

Բաբիական շարժման մեջ իր առաջադիմական, դեմոկրատական հայացքներով աչքի էր ընկնում Ղազվին քաղաքի հայտնի աստվածաբան մոլլա Մոհամմադ Սալեհի դուստր Թահիրե Ղորրաթ օլ Այնը (աչքի լույս)։ Դեռ մանկությունից նա կրել է իր հորեղբոր գաղափարական ազդեցությունը, որը Սեյեդ Ռաշտիի համախոհներից էր։

Տեղեկանալով Բաբի հայտնության մասին, Ղորրաթ օլ Այնը դառնում է նրա ամենանվիրված հետևորդներից մեկը և ամենուրեք սկսում քարոզել նրա ուսմունքը։ Հեռանալով ամուսնուց, որը Բաբի վարդապետության ուժգին հակառակորդներից էր, Ղորրաթ օլ Այնը 1843 թ. մեկնում է Քարբելա[23]։ Աղբյուրների վկայությամբ նա Քարբելայում առանց չադրայի, բաց երեսով, կանանց և տղամարդկանց բաբիզմ էր քարոզում։ Դա շարժում է Քարբելայի բարձր հոգևորականների զայրույթը և նրանք Բարձր Դռնից պահանջում են Ղորրաթ օլ Այնին հեռացնել երկրի սահմաններից[24]։ Այնուհետև նա հարկադրված տեղափոխվում է Բաղդադ, որտեղ, ինչպես հայտնում է միրզա Ջանին, ուժգին վեճի մեջ է մտնում տեղի մոջթահեդների հետ և քիչ է մնում զոհ դառնա[25]։

Հեռանալով Թուրքիայի սահմաններից, Ղորրաթ օլ Այնը գնում է Քերմանշահ, հետո անցնում Սպահան, ապա Ղազվին և ամենուրեք քարոզում Բաբի վարդապետությունը։ Հետագա իրադարձությունները

---

21 بيان الباب السادس من الواحد الخامس

22 بيان الباب الرابع من الواحد السادس

23 بررسی و محکمه در تاریخ و احکام باب و بهاء، جلد اول، ص ۷۵

24 Ատրպետ, *Իմամաթ*, *Ալեքսանդրապոլ*, *1906*, *էջ 85—86*։

25 کتاب نقطة الکاف، ص ۱۴۱

նրան ստիպում են հեռանալ Ղազվինից և մեկնել Խորասան, որտեղ կայանալու էր բաբիականների ամենակարևոր համահավաքը։

Բաբիական շարժման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թե Բաբը և թե նրա մերձավոր համախոհները այդ ուսմունքի տարածման սկզբնական շրջանում անտեսում էին ժողովրդական զանգվածների դերն ու ուժը։ Նրանք ամենուրեք ձգտում էին իրենց ուսմունքը տարածել Իրանի բարձր հոգևորականության և պետական բարձրաստիճան գործիչների մեջ և նրանց օգնությամբ բարեկարգումներ մտցնել Իրանի սոցիալական կյանքում։ Սակայն, հետագայում, այդ աղանդի առաջադիմական գաղափարների տեր մի շարք առաջնորդներ, որոնցից էին բարֆրուշեցի Մոհամմադ Ալին, որը շատ ավելի մոտ էր կանգնած գյուղացիությանը և քաղաքային չքավոր խավին, և Ղորրաթ օլ Այնն իրենց նպատակների իրականացման համար դիմում են ժողովրդական զանգվածներին։ Նրանք նույնիսկ Բաբի առաջադրած դրույթներից դուրս են նետում այն պատվիրանները, որոնք հակասում էին գյուղացիության և ընչազուրկ խավի շահերին։

Այսպիսով, բաբիականների մեջ առաջ է գալիս տարաձայնություն, որն իր դրսևորումն է գտնում 1848 թ. Բեդաշթում կայացած բաբիականների համաժողովի ժամանակ։ Ըստ միրզա Ջանիի, այդ համաժողովին մասնակցում էին ավելի քան 300 բաբիներ[26]։ Մոհամմադ Ալի բարֆրուշեցին և Ղորրաթ օլ Այնը ղեկավարում էին այդ կարևորագույն հավաքը։ Համաժողովին ներկա էին նաև նուրեցի միրզա Հոսեյն Ալին (Բահա օլլահը) և բաբիական այլ անվանի առաջնորդներ։

Այդ համաժողովում առաջարկվեց գոյություն ունեցող բոլոր օրենքների և կարգերի, այդ թվում՝ հարկերի, պարհակների և մասնավոր սեփականության վերացում։ Ժողովում հայտարարվեց, որ վրա է հասել միջմարգարեության ( فترت ) ժամանակաշրջանը, որի հետևանքով հին օրենքները վերանում են, և քանի որ դեռևս նոր օրենքներ հրապարակի վրա չկան, բոլոր այն անձինք, որոնք համարվում են բարձր, կընդառնան ստորին, իսկ ստորինները՝ բարձր[27]։

Բարֆրուշեցի Մոհամմադ Ալին զգալի չափով առաջ անցնելով Բաբի ուսմունքից, առաջարկում է ունեցվածքի ընդհանրություն, որպեսզի մարդիկ բոլոր բարիքներից օգտվեն հավասարապես[28]։ Նա առաջարկում է նաև իրավունքների հավասարություն կանանց և տղամարդկանց միջև։

---

26 كتاب نقطة الكاف، ص ١٥٣

27 Նույն տեղում, էջ 201—202։

28 Նույն տեղում, էջ 151։

Այդ համահավաքում հանդես է գալիս Ղորրաթ օլ Այնը և պահանջում իսլամի օրենքների և կարգերի վերացում[29], երկու սեռերի հավասարություն, չադրայի վերացում, սիրո վրա հիմնված ամուսնություն և այլն[30]։

Այսպիսով, Բեդաշթում Բաբի առաջադիմական հայացքներ ունեցող համախոհները մերժեցին նրա ուսմունքի այն դրույթները, որոնք անմիջականորեն պաշտպանում էին առևտրական դասի շահերը և առաջ քաշեցին այնպիսի դրույթներ, որոնք պաշտպանում էին միայն և միայն գյուղացիության և չքավոր խավի շահերը։ Այդ առաջադիմական գաղափարները բոլոր բաբիականների կողմից չընդունվեցին, որի հետևանքով, ինչպես նշեցինք, բաբիական աղանդի մեջ պառակտում առաջացավ։

Համաժողովի առաջադրած նոր դեմոկրատական դրույթները քաջալերում էին Բեդաշթի շրջակայքում բնակվող գյուղացիությանը, որոնք խմբերով գալիս էին լսելու այդ քարոզները։

Դա սարսափ առաջացրեց Բեդաշթից ոչ հեռու գտնվող Շահռուդ քաղաքի իշխանությունների և հոգևորականության շրջանում, որոնց պահանջով զինված ուժերը ցրեցին հավաքը։ Սակայն մոլլա Մոհամմադի և նրա մերձավոր համախոհների դեմոկրատական գաղափարները համախմբեցին Իրանի գյուղացիությանը և քաղաքների չքավոր խավին։ Ստեղծվեց հակապետական և հակագաղութարարական զորեղ մի շարժում, որն անսասան կերպով պայքարում էր հանուն ազատության և հավասարության։

* *
*

1848 թ. Մոհամմադ շահը մահացավ և մինչ Նասր էդ-Դին շահի գահակալումը Թեհրանում, գավառներում տեղի են ունենում նոր հուզումներ։ Խորասանում, Սպահանում, Քերմանում, Շիրազում և Յազդում ծագեցին խռովություններ։ Մազանդարանի նահանգապետն իր մերձավորների հետ մեկնեց Թեհրան, իր հետագա անելիքները որոշելու համար. մյուս նահանգապետները ևս գտնվում էին անորոշ կացության մեջ[31]։

Օգտվելով երկրում տիրող խառնաշփոթ դրությունից, իրենց մտա-

[29] بررسی و محکمه در تاریخ عقائد و احکام باب و بهاء، ص ۱۰۳

[30] Ատրպետ, *Իմամաթ*, էջ 88։

[31] *М. Иванов*, Очерк истории Ирана, М., 1952, стр. 162.

դրություններն իրականացնելու նպատակով բաբիները Բարֆրուշ քաղաքում բացեիբաց սկսում են զինվել[32]։

Բարֆրուշի քաղաքապետը և բարձր հոգևորականությունը գիտակցելով, որ միայն քաղաքի զինված ուժերով անհնար է խափանել բաբիների ծավալուն գործունեությունը, այլ քաղաքներից զորավիգ ուժեր պահանջեցին։ Շուտով Մահամմադ բեկի գլխավորությամբ 300 հոգուց բաղկացած մի հրաձգային ջոկատ է ուղարկվում Բարֆրուշ։ Տեղի են ունենում կատաղի մարտեր։ Մոհամմադ բեկը ցանկանալով սարսափ առաջացնել բաբիականների շարքերում, չափազանց դաժան է վարվում գերվածների հետ՝ հաճախ կենդանի թաղելով նրանց[33]։ Սակայն դա ավելի է բորբոքում բաբիներին, որոնք ավելի համարձակ են սկսում մարտնչել։ Իշխանությունները տեսնելով, որ բռնությունները արդյունք չեն տալիս, սկսում են բանակցել բաբիների հետ։ Հակառակորդ կողմերը համաձայնության են գալիս, որ բաբիները անարգել հեռանան Մազանդարանի սահմաններից, սակայն այդ պայմանավորվածությունը չի բավարարում տեղական ավելի ռեակցիոն տարրերին։ Նրանք որոշում են վերջնականապես արմատախիլ անել բաբիներին և այդ նպատակով կազմում են մի հեծյալ շոկատ։

Երբ բաբիները բավականաչափ հեռանում են քաղաքից և հանգստանալու նպատակով կանգ առնում Շեյխ Թաբարսիի դամբարանի մոտակայքում, նրանց վրա է հարձակվում վերոհիշյալ ջոկատը, որը շուտով համալրվում է նոր ուժերով։ Բաբիները պաշտպանվելու նպատակով ստիպված են լինում մտնել Շեյխ Թաբարսիի դամբարանը[34]։

Այս լուրն անմիջապես տարածվում է ամբողջ Իրանով մեկ։ Շուտով բաբիներին է միանում Բեդաշթի բաբիականների համաժողովի առաջնորդ բարֆրուշեցի Մոհամմադ Ալին, որի ջանքերով շրջակա գյուղերի բնակչության մեջ ավելի է ուժեղանում բաբիների նկատմամբ համակրանքը։ Գյուղացիներն ամենուրեք պարենամթերքներով ապահովում են բաբիներին։ Շեյխ Թաբարսիի մոտակայքի երկու գյուղերի գյուղացիությունը ամբողջությամբ գալիս է Շեյխ Թաբարսիի դամբարան և միանում բաբիներին[35]։ Շատ կարճ ժամանակամիջոցում բաբիների թիվը

---

[32] روضة الصفاء جلد دهم, թերթ 62 ա։

[33] كتاب نقطة الكاف، ص ١٥٨

[34] كتاب نقطة الكاف، ص ١٥٩

[35] Tarikh-i-Jadid, pp. 105—106.

հասնում է 2000-ի[36], որոնց մեծամասնությունը կազմում էին գյուղացիներն ու արհեստավորները։

Շեյխ Թաբարսիում բաբիները կառուցում են ամուր բերդ և ամրանում այդտեղ։

Շեյխ Թաբարսիի ապստամբությունը, որը տևեց ութ ամիս, ահ ու սարսափ առաջացրեց Իրանի կառավարության և, հատկապես, հետադիմական հոգևորականների շրջանում։ Այս ապստամբությունը ղեկավարում էին մոլլա Մոհամմադ Ալի բարֆրուշեցին և մոլլա Հոսեյն Բուշրույին։ Շեյխ Թաբարսիի բաբիական համայնքում նրանք վերացրին մասնավոր սեփականությունը և հաստատեցին իրավունքի հավասարություն։ Այնտեղ յուրաքանչյուրի սեփականությունը հայտարարվում էր ընդհանուրինը։ Ինչպես վկայում է միրզա Ջանին, նրանք բոլորը սնվում էին նույն սեղանից և տարբեր մասնագիտությունների տեր արհեստավորների արտադրանքը պատկանում էր բոլորին[37]։

Թեհրանում ռուսական դեսպան Դ. Դոլգորուկիի՝ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր կոմս Նեսելռոդին 1849 թ. փետրվարի 10-ին ուղարկած զեկուցագրում ասվում է, որ «նրանք (բաբիականները—Հ. Փ.) զենքի ուժով արմատավորում են կոմունիզմ»[38]։

Կառավարության հրամանով Շեյխ Թաբարսիում ծավալված բաբիականների ապստամբության ճնշման գործը հանձնարարվում է Մազանդարանի խաներին։ Շուտով մի զորամաս է ուղարկվում Շեյխ Թաբարսիի ամրոց։ Բաբիները իրազեկ դառնալով այդ զորամասի ժամանմանը՝ գիշերվա կեսին մոլլա Հոսեյնի ղեկավարությամբ անակնկալ կերպով հարձակվում են նրանց վրա և փախուստի մատնում[39]։

Բաբիների այս հաղթանակը մեծ սարսափ է առաջացնում Թեհրանում, որտեղ որոշում են նորընտիր նահանգապետ միրզա Մեհդի Ղուլիի գլխավորությամբ մի նոր զորամաս ուղարկել Մազանդարան՝ շարժումը վերջնականապես արմատախիլ անելու համար։ Բացի այդ, Մազանդարանի բոլոր խաներին կարգադրում են կազմակերպել նոր զինված ջոկատներ և պատրաստ լինել միանալու կանոնավոր բանակին[40]։

Նոյեմբերի վերջերին արքայազն Մեհդի Ղուլի խանը 2000-անոց

---

36 روضة الصفاء جلد نهم, թերթ 62 բ։

37 كتاب نقطة الكاف، ص ١٥٩

38 АВПР, Фонд. Канцелярия, д. № 177, л. 56—58.

39 كتاب نقطة الكاف، ص ١٦١

40 Նույն տեղում։

բանակով շարժվում է դեպի Մազանդարան։ Ճանապարհին նրան է միանում Թուրքմենական և քրդական մեծաթիվ հեծելազորը։ Այդ բանակը մոտենալով Շեյխ Թաբարսիի սահմաններին, կենտրոնանում է Վասեկիս գյուղում։

Մեհդի Ղուլի Միրզան զգալով, որ ուժի միջոցով բավական դժվար կլինի ճնշել այդ շարժումը, որոշում է բանակցություններ վարել բաբիների առաջնորդների հետ։ Նա մի նամակով հարցում է կատարում նրանց պահանջների մասին և առաջարկում ցած դնել զենքերը։ Բարֆրուշեցի մոլլա Մոհամմադ Ալին պատասխան նամակում շարադրում է ապստամբության նպատակները, Նասր էդ Դին շահին անվանում «թեթևամիտ ու կեղծարար», սուր քննադատում բարձրաստիճան հոգևորականության կեղծարարությունները։ Նա միաժամանակ պահանջում է բաբիական առաջնորդների և բարձրաստիճան հոգևորականության միջև կայացնել հրապարակային բանավեճ, որպեսզի վերջնականապես պարզվի, թե ով է իրավացի, ով՝ մեղավոր։

Մեհդի Ղուլի միրզան ժամանակ շահելու նպատակով ընդունում է բաբիների առաջարկությունները։

Ինչպես նշվեց, Շեյխ Թաբարսիի շրջանում գտնվող գյուղերի բնակչությունը պարենամթերք էր մատակարարում պաշարված բաբիականներին[41]։ Շեյխ Թաբարսիի մատակարարումը խափանելու համար Մեհդի Ղուլի միրզան կարգադրում է պաշարման գործը ավելի ուժեղացնել և ամրոցի վերածված դամբարանը լրիվ մեկուսացնել դրսի աշխարհից։ Սակայն այդ միջոցառումները և զորքերի թվի քառապատիկ ավելացումը ոչ մի կերպ չընկճեցին բաբիներին[42]։

Ինչպես վկայում են աղբյուրները, ուրիշ վայրերից եկած բաբիներ փորձում էին ներթափանցել Շեյխ Թաբարսիի ամրոցը, որպեսզի միանան իրենց պաշարված համախոհներին. դրանցից էին «Նողթաթ օլ քաֆ» գրքի հեղինակ միրզա Ջանին, Բահաօլլահը և Սոբհե Ազալը։ Սակայն չի հաջողվում իրականացնել այդ մտադրությունը և նրանք շուտով ձերբակալվում են իշխանությունների կողմից և ազատվում միայն փրկագին տալուց հետո[43]։

Ինչպես գրված է «Ստուգում և ուսումնասիրություն Բաբի և Բահայի դավանանքի և կրոնական կարգագրեր» գրքում այդ ժամանակաշրջա-

---

[41] *Мирза Казем-Бек,* Баб и бабиды. религиозно-политические смуты в Персии 1844—1852, СПб., 1866, стр. 75.

[42] Նույն տեղում։

[43] Tarikh-i-Jadid. pp. 64—65.

նում Ղորրաթ օլ Այնը հաճախակի առանց չադրայի, ձիու վրա, սուրը ձեռքին հայտնվում էր Շեյխ Թաբարսիի շրջակա գյուղերում և քաղաքում, որ անցել են՝ այն ժամանակները, երբ կարպետների վրա Ղորան էին ընթերցում, հիմա հասել է այն պահը, երբ պետք է համախմբվել և վերջ տալ երկրում տիրող քաոսային վիճակին[44]։

Մեհդի Ղուլի միրզան անհամբեր սպասում էր Լարիջանից եկող ուժերի ժամանմանը, ուստի անընդհատ ձգձգում էր իր բանակցությունները բաբիների հետ։

1849 թ. հունվար ամսին, խիստ ձմռան պայմաններում, բաբիականները որոշում են մինչև Լարիջանի ուժերի ժամանումը անսպասելի հարձակում գործել թշնամու բանակի վրա, որն անկանոն կերպով ցրված էր գյուղացիների խրճիթներում։ 300 բաբիներ մոլլա Մոհամմադ Ալիի և միրզա Հոսեյնի ղեկավարությամբ[45] գիշերը զգուշությամբ դուրս են գալիս իրենց ամրոցից, շրջանցում Վասեկիս գյուղը, որտեղ անհոգ ննջում էին զինվորները, հասնում են Լարիջան տանող ճանապարհին։ Այնուհետև իրենց մարտիկներից մի քանիսին ուղարկում են թշնամու բանակը ու հայտնում, թե ժամանում են Լարիջանից եկող ուժերը։

Այսպիսով, նրանց հաջողվում է, առանց արգելքի, 300 մարտիկներով մտնել գյուղ և շրջապատել հակառակորդին[46]։

Բաբիներն առաջին հերթին վերացնում են թշնամու պահակներին, հարձակվում այն տան վրա, որտեղ բնակվում էր ինքը՝ Մեհդի Ղուլի միրզան, ցանկանալով վերջինիս կենդանի գերի վերցնել։ Այդ հարձակման ընթացքում բաբիներին հաջողվում է սպանել արքայազնի շքախմբի 25 անձանց[47]։

Ըստ Միրզա Ջանիի, Մազանդարնի նահանգապետին հաջողվում է թռչել կտուրից, թաքնվել անտառում[48]։ Սակայն բաբիները այրում են այն տունը, որտեղ թաքնված էին Ֆաթհ Ալի շահի և Ջել էս Սոլթանի որդիները[49]։ Խուճապային փախուստի դիմող զինվորները բաբիներին թողնելով իրենց զինամթերքը, թաքնվում են շրջակա անտառներում։

---

[44] Ըստ Մ. Իվանովի, Բեդաշթի իրադարձություններից հետո Ղորրաթ օլ Այնը մեկնում է՝ Մազանդարանի Նուր բնակավայրը, որտեղ ձերբակալվում է իշխանությունների կողմից և աքսորվում Թեհրան։ Տե՛ս „Бабидскне восстання в Иране", էջ 86։

[45] كتاب نقطته الكاف، ص ١٦٧

[46] *Мирза Казем-Бек,* Баб и бабиды, стр. 76.

[47] روضته الصفاء جلد دهم *թերթ 62 բ*։

[48] كتاب نقطته الكاف، ص ١٦٧

[49] Առբպետ, *Իմամաթ, էջ 68, Տե՛ս նաև՝* كتاب نقطته الكاف، ص ١٦٧

Այդ մարտադաշտում կառավարական զորքերը կորցնում են մոտ 300 զինվոր, իսկ բաբիների կորուստը կազմում է ընդամենը 3 մարդ[50]։

Կանոնավոր բանակի այդ պարտությունն այնպիսի ահ ու սարսափ է առաջացնում Բարֆրուշի, Մազանդարանի և այլ քաղաքների խաների և մոջթահեդների մեջ, որ վերջիններս թողնելով իրենց ունեցվածքը, փախչում են սարերը[51]։

Երկրում տիրող խառնաշփոթ դրությունը և Շեյխ Թաբարսիում բաբիականների պարբերական հաղթանակները աննկարագրելի սարսափ առաջացրին մայրաքաղաքում։ Կառավարությունը Մազանդարանի Լարիջանի զորամասերին կրկին խիստ կարգադրում է վերջնականապես ջախջախել բաբիներին։ Կենտրոնական և տեղական իշխանությունների համատեղ ջանքերով կազմվում է 7000-անոց մի բանակ, որը զինված էր հրացաններով և թնդանոթներով[52]։

Բաբիները մերձավոր գյուղերի բնակիչներից տեղեկանալով զորքերի տեղակայման և պահակների դասավորության մասին, 1849 թ. փետրվարի առաջին կեսին որոշում են կրկին անակնկալ հարձակում գործել նրանց վրա։ Այդ հարձակումը տեղի է ունենում փետրվարի 3-ի գիշերը, որին մասնակցում էին 400 խիզախ բաբիներ՝ մոլլա Հոսեյն Բուշրուիի ղեկավարությամբ։ Որպեսզի թշնամու բանակում տագնապ չառաջանա, նրանք ձիերի սմբակները փաթաթում են լաթերով, ձմռան այդ սառնամանիքին հանում կոշիկները քայլում ոտաբոբիկ։ Նրանց որոշ մասը զինված էր հրացաններով, իսկ մեծամասնությունը՝ սրերով և նիզակներով։ Գնդակների խնայողության նպատակով հարձակման պահին համազարկ էին տալիս, հետո մոտենալով թշնամուն, սրերով ու նիզակներով հարձակվում էին նրանց վրա։ Ինչպես գրում է միրզա Ջանին, ճակատամարտի ընթացքում, երբ առաջին շարքի բաբիներից որևէ մեկն ընկնում կամ ծանր վիրավորվում էր, նրան անմիջապես փոխարինում էր մի ուրիշը[53]։ Նրանց այդ անակնկալ հարձակումն այնպիսի խառնաշփոթություն է առաջացնում հակառակորդի զինվորների մեջ, որ վերջիններս շփոթահար, իրենց կյանքը փրկելու համար դիմում են փախուստի։ Չնայած մեծ կորուստներին, կառավարական զորքերին հաջողվում է սպանել բաբիների առաջնորդ մոլլա Հոսեյնին[54]։

---

50 كتاب نقطة الكاف، ص ١٦٨

51 *М. Иванов,* Бабидские восстания в Иране (1848—1852). М., 1939, стр. 97.

52 Ատրպետ, *Իմամաթ, էջ 69։*

53 كتاب نقطة الكاف، ص ١٧١

54 كتاب نقطة الكاف، ص ١٧٢՝ Նույնը տե՛ս روضة الصفاء جلد دهم

*Այդ ճակատամարտում կանոնավոր բանակի կորուստը կազմում է 400 սպանված, այդ թվում 35 սպաներ և 1000-ից ավելի վիրավորներ, իսկ բաբիների կորուստը կազմում էր 70 սպանված և 30 վիրավոր*[55]*։*

*Աղբյուրները վկայում են, որ 7000-ից բաղկացած կանոնավոր բանակի շարքերում հիշյալ ճակատամարտից հետո մնացել էր ընդամենը 50 մարդ*[56]*։*

*Այդ իրադարձություններից մի քանի օր անց, տեղական իշխանությունների և հոգևորականության միացյալ ջանքերով կազմված զորքերը կրկին շարժվում են դեպի Շեյխ Թաբարսի։ Սակայն երբ նրանք հասնում են բաբիների ամրոցը, ականատես են լինում մի ահավոր տեսարանի. բերդի պարիսպների երկարությամբ, ցցերի վրա, բարձրացված էին վերջին ճակատամարտի ժամանակ սպանված զինվորների գլուխները։ Դա կատարվել էր թշնամու բանակում ավելի մեծ սարսափ առաջացնելու նպատակով*[57]*, հաջի Մոհամմադ Ալիի կարգադրությամբ։*

*Այդ հոգեբանական քայլը ծառայում է իր նպատակին և աննկարագրելի սարսափ է առաջացնում թշնամու բանակում։ Բացի այդ, երբ հակառակորդը մոտենում է բերդին, բաբիները բացում են բերդի դարպասը և թշնամուց գրաված հրացաններով ու թնդանոթներով հարձակվում նրա վրա*[58]*։ Այդ իրադարձությունը տեղի է ունենում գիշերը, և թշնամու զորքը չնկատելով, որ բաբիների թիվը մի քանի տասնյակից չէր անցնում, դիմում է փախուստի։ Հաջորդ օրը թշնամին կրկին պաշարում է բերդը, կառուցում հողաթմբեր՝ նպատակ ունենալով գնդակոծել ամրոցի ներսը*[59]*։*

*Պաշարողները հրկիզող հրթիռներով այրում են ամրոցի ներսում գտնվող բոլոր շինությունները։ Դա բաբիներին ստիպում է լքել իրենց տնակներն ու տեղափոխվել խոնավ գետնափորները։ Այսպիսով, բաբիների կապը մերձավոր գյուղացիների հետ համարյա կտրվում է, իսկ նրանց պաշարը՝ սպառվում։*

*Ըստ միրզա Ջանիի, Մեհդի Ղուլի խանը, ցանկանալով պառակտում առաջացնել բաբիների շարքերում, առաջարկում է պաշարված բաբիներին լքել իրենց ընկերներին և հեռանալ ամրոցից*[60]*։ Այնուհետև նրանք*

---

55 كتاب نقطة الكاف، ص ١٧٣

56 كتاب نقطة الكاف، ص ١٧٣ *Նույնը տե՛ս, Ատրպետ, Իմամաթ, էջ 68։*

57 Ատրպետ, *նույն տեղում։ Տե՛ս նաև՝* كتاب نقطة الكاف، ص ١٧٧

58 كتاب نقطة الكاف، ص ١٧٨

59 كتاب نقطة الكاف، ص ١٧٨—١٨٠ *նաև՝* روضة الصفاء جلد دهم *թերթ 64 ա.*

60 كتاب نقطة الكاف، ص ١٨٧

գտնում են բաբիների առաջնորդ բարֆրուշեցի Մոհամմադ Ալիի հորը և ուղարկում ամրոց, որպեսզի նա համոզի որդուն՝ անձնատուր լինել։ Սակայն այդ բոլոր ձեռնարկումներն անցնում են ապարդյուն[61]։

Այդ օրերին կառավարական բանակն անընդհատ ուժեղանում է և խորացնում բերդի պաշարումը։ Մերձավոր գյուղերից պաշար հայթայթելու բաբիների մի քանի փորձերն ավարտվում են անհաջողությամբ[62]։ Այս դժվարությունները ոմանց մոտ տատանում են առաջացնում։ Ինչպես նշում է միրզա Ջանին, իրենց կյանքը փրկելու նպատակով երկու բաբիների հետ միասին փախուստի է դիմում ոմն Մոհամմադ Հոսեյին, որը թշնամուն իրազեկ է դարձնում բերդում տիրող իրադարձությունների, մոլլա Հոսեյնի մահվան մասին[63]։ Ապրիլի կեսերին բերդից փախչում են նաև 30 բաբիներ և հայտնում, որ պաշարվածները սովի են մատնվել[64]։

Այս լուրը ոգևորում է կառավարական զորքերին։ Նրանք որոշում են հարձակվել բերդի վրա։ Զինվորների մեջ շահագրգռվածություն առաջացնելու նպատակով հինգ կարգի պարգևներ են սահմանվում։ Առաջին կարգի պարգևը՝ 500 թումանի չափով, նրան ով առաջինը հաղթության դրոշ կբարձրացնի բերդի պարիսպների վրա։

Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, բերդի վրա ձեռնարկված հարձակումը ձախողվում է[65]։

Սակայն բաբիների վիճակը շարունակ վատանում է. նրանց թիվը նվազելով հասել էր 250-ի։

Անելանելի դրությունը և այն հանգամանքը, որ այլևս հնարավոր չէր դիմադրել մոտ 10.000 մարդուց բաղկացած բանակին, հարկադրում են մոլլա Մոհամմադ Ալի բարֆրուշեցուն՝ Մեհդի Ղուլի միրզային հայտնելու, որ կդադարեցնեն պայքարը, եթե իրենց թույլատրվի անարգել կերպով հեռանալ այդ մարզերից։

Այդ առաջարկությունը մեծ գոհունակություն է առաջացնում բանակի հրամանատարի մոտ, որը երդվում է Ղորանով նրանց ազատ արձակել[66]։ Սակայն, երբ Մոհամմադ Ալին բանակի կողմից ուղարկված

61 Նույն տեղում, էջ 189։
62 Նույն տեղում, էջ 184—187։
63 Նույն տեղում, էջ 187։
64 Նույն տեղում, էջ 188։
65 Նույն տեղում, էջ 191։
66 Ատրպետ, Իմամաթ, էջ 69։

ձիու վրա նստած, իր հավատարիմ 230 մարտիկների հետ դուրս է գալիս ավերված Շեյխ Թաբարսիի ամրոցից, անմիջապես շրջապատվում է զորամասերի կողմից։ Քանի որ բաբիները զինված էին, վերջիններս չեն համարձակվում նրանց վրա հարձակում գործել[67]։

Հաջորդ օրը արքայազն Մեհդի Ղուլի միրզան ճաշի է հրավիրում Հաջի Մոհամմադ Ալիին և նրա մերձավոր օգնականներին։ Ճաշի ժամանակ ձերբակալվում են բաբիների բոլոր առաջնորդները, որից հետո Հաջի Մոհամմադ Ալիից պահանջում են կարգադրել իր հետևորդներին հանձնելու զենքերը, որը և կատարվում է[68]։

Բաբիներին զինաթափ անելուց հետո զինվորները հարձակվում են նրանց վրա և կոտորում, կենդանի թողնելով միայն առաջնորդներին[69]։ Ավարտելով կոտորածը, բանակը շարժվում է դեպի Շեյխ Թաբարսի բերդը և անմիջապես ավերում այն։

Իշխանությունները ահավոր դաժանությամբ սպանում են կենդանի մնացած բաբիների առաջնորդներին, իսկ այդ շարժման ամենաառաջադիմական ներկայացուցիչ բարֆրուշեցի Մոհամմադ Ալիին վաճառում են նրա ամենաոխերիմ թշնամի, Մազանդարանի հոգևորականության առաջնորդ սեյեդ օլ Օլամային։ Վերջինս իր ձեռքով կացնահար է անում Մոհամմադ Ալիին և մարմինը մասնատելով՝ նետում քաղաքի սահմաններից դուրս[70]։

Մազանդարանում բաբիական շարժման անկումից անմիջապես հետո տեղի իշխանությունները խիստ դատաստան են տեսնում այն գյուղացիների հետ, որոնք օժանդակել էին նրանց։

Զանջանի ապստամբությունը, Մազանդարանում տեղի ունեցած բաբիների ծավալուն, երկարատև, հերոսական ազատագրական պայքարը մեծ ազդեցություն է թողնում ամբողջ երկրում։ Նկատելի կերպով աճում ու համալրվում է բաբիական ուսմունքի հետևորդների թիվը։ Նրանք պրոպագանդում և տարածում են այդ ուսմունքը և Իրանի ընչազուրկ բազմահազար բնակչությանը հրահրում պայքարի՝ հանուն ազատության և սոցիալական հավասարության։ Դրանցից էր զանջանցի մոլլա Մոհամմադ Ալին, որը մեծ հարգանք էր վայելում Զանջանի շրջակա գյուղացիության և քաղաքային չքավորության շրջանում։ Ըստ միրզա

---

67 كتاب نقطة الكاف، ص ۱۹۳

68 Նույն տեղում։

69 كتاب نقطة الكاف، ص ۱۹۳ ըստ Առրպետի այդ կոտորածից կենդանի են մնում 16 բաբիներ, որոնք դիմում են փախուստի և Իրանով մեկ տարածում այդ հերոսական մարտերի իրադարձությունները։ Տե՛ս Առրպետ, Իմամաթ, էջ 69։

70 كتاب نقطة الكاف، ص ۱۹۷

*Զանիի, վերջինիս տարած պրոպագանդիստական աշխատանքի շնորհիվ խամսե նահանգի մի քանի հազար գյուղացիներ դառնում են այդ աղանդի հետևորդները*[71]*։ Նրա ժողովրդականությունն ու համբավը զգաստացնում է տեղական իշխանություններին ու հոգևորականներին։ Վերջիններս նրա հակապետական ծավալուն գործունեությունը կանխելու և մեկուսացնելու նպատակով բողոքներ են ուղարկում արքունիք և պահանջում սանձել բաբիներին և նրանց առաջնորդ մոլլա Մոհամմադ Ալիին*[72]*։ Արքունիքը, ընդառաջելով Զանջանի ղեկավար մարմինների պահանջին, անմիջապես մի հեծյալ ջոկատ է ուղարկում, որը սարսափեցնելով բնակչությանը, կարողանում է կալանավորել Մոհամմադ Ալիին և տանել Թեհրան։ Մայրաքաղաքում նա աներկյուղ պաշտպանում է իր դավանանքը, իսկ Մոհամմադ շահի մահանալուց հետո փախչում բանտից և վերադառնում իր ծննդավայրը*[73]*։ Զանջանում գնալով աճում է բաբիների թիվը, ապստամբության նախօրյակին հասնելով հազարների*[74]*։ Դրա շնորհիվ նրանք փաստորեն դառնում են քաղաքի տերն ու տիրակալը։*

*Ֆեոդալական բռնությունների ու կեղեքիչ հոգևորականների անլուր դաժանությունները ժողովրդական զանգվածների զայրույթը հասցրել էին գագաթնակետին և պետք էր մի չնչին առիթ, որպեսզի բռնկվեր համաժողովրդական ապստամբություն։*

*Այդպիսի առիթը ներկայացավ 1850 թ. գարնանը, երբ շահի կողմից նշանակված նոր նահանգապետ Աբդոլ Ղասեմ Ասլան խանը կարգադրեց բանտարկել հակառակորդներից մեկի հետ վեճի մտած մի բաբիականի։ Նահանգապետի այդ արարքը առիթ տվեց բաբիներին հարձակվելու բանտի վրա, բոլոր բանտարկյալներին ազատելու համար։ Տեղի ունեցած իրադարձությունները հարկադրում են նահանգապետին անվանի խաների ու մոջթահեդների ժողով հրավիրել։ Այդ ժողովում որոշվում է ձերբակալել մոլլա Մոհամմադ Ալիին և սպանել նրան, իսկ նրա բոլոր զինակիցներին՝ կալանավորել։ Բարձրաստիճան հոգևորականությունը իր հերթին բաբիներին «չահադ»՝ սրբազան պատերազմ է հայտարարում։*

*Բաբիներն ամենուրեք սկսում են զինվել և նախապատրաստվել նոր գոտեմարտերի։ Զինամթերքների ձեռքբերման ուղղությամբ մեծ*

---

[71] كتاب نقطته الكاف، ص ١٢٦

[72] Ատրպետ, *Իմամաթ, էջ 73։*

[73] *Նույն տեղում։*

[74] روضته الصفاء جلد دهم *թերթ 65 բ։*

*գործունեություն է ծավալում Զանջանի բաբիների առաջնորդի օգնական Դին Մոհամմադը*[75]*։ 1850 թ. մայիսին բաբիները բացեիբաց սկսում են իրենց պայքարը միապետական իշխանությունների դեմ և գրավում քաղաքի Ալի Մարդան խան միջնաբերդը։ Նրանք անմիջապես սկսում են բերդի վերանորոգումը, կառուցում բազմապիսի պաշտպանական ամրություններ*[76]*։ Այսպիսով, քաղաքը բաժանվում է երկու մասի, արևմուտքը գրավում են բաբիները, իսկ արևելքը՝ քաղաքի ավելի ընդարձակ մասը, որի մայրուղին կապվում էր մայրաքաղաքի հետ, մնում է իշխանությունների ձեռքում։ Սա հարկադրում է բաբիների գրաված մասում ապրող ունևորներին փախչել քաղաքի մյուս մասը։ Հակադիր կողմերն անմիջապես սկսում են կառուցել փողոցային բարիկադներ և ամրություններ։ Զանջանի շրջակա գյուղերի բնակիչներն իրենց ամբողջ ընտանիքներով, բաբիներին միանալու նպատակով, շարժվում են դեպի քաղաք։ Բաբիների թիվը հասնում է 3000-ի։ Նրանց մեծամասնությունը գյուղացիներ ու արհեստավորներ էին*[77]*, կային մեծ թվով կանայք*[78]*։ Աղբյուրները նշում են, որ բաբիները ստեղծում են մարտական կոմիտե։ Ապստամբության առաջնորդ է նշանակվում մոլլա Մոհամմադ Ալին, նրան օգնական է ընտրվում Դին Մոհամմադը, որը միաժամանակ ապստամբների ջոկատների հրամանատարն էր։*

*Խռովության սկզբնական շրջանում պետական իշխանությունները և հոգևորականները ցանկանալով տեռորի միջոցով խափանել և վերացնել շարժումը, փորձում են սպանել Մոհամմադ Ալիին։ Սակայն այդ փորձը չի հաջողվում և առիթ է դառնում, որ քաղաքի երկու մասերի միջև հաղորդակցությունը լրիվ վերանա*[79]*։*

*Մազանդարանի Շեյխ Թաբարսիի ռաբիական հերոսական ապստամբությունը և արյունահեղ մարտերը հարկադրում են Զանջանի պետական գործիչներին ավելի խելամիտ մոտենալ այդ ապստամբությանը։ Նրանց ռազմական հրամանատարությունը որոշում է մինչ պատերազմն սկսելը հաշտության բանակցությունների պատրվակի տակ թշնամու թիկունքն ուղարկել սարդար Ալի խանին, որն իր «բանակցության» ընթացքում զննում և ուսումնասիրում է բաբիների կառուցած տարբեր ամրությունները և տեղաբաշխումը*[80]*։ Սակայն դա չի ծառայում իր*

---

[75] Tarikh-i-Jadid, p. 144.

[76] **Ատրպետ,** *Իմամաթ, էջ 73։*

[77] كتاب نقطة الكاف، ص ٢٤٢

[78] **Ատրպետ,** *Իմամաթ, էջ 73։*

[79] *М. Иванов,* Бабидские восстания в Иране, стр. 112—113.

[80] روضة الصفاء جلد دهم, *Թերթ 65 բ։*

նպատակին. ապարդյուն բանակցություններից հետո, թնդանոթներով և հրասանդներով հարձակման անցած պետական զորամասերը հանդիպում են այնպիսի մի հակահարվածի, որ մեծ կորուստներով, խառնաշփոթությամբ ետ են նահանջում։

Այդ պարտությունը ստիպում է պետական զորքերի համար նոր ուժեր պահանջել կենտրոնից։ Սակայն դա ևս արդյունք չի տալիս։ Արքունիքը ապստամբությունը վերջնականապես ջախջախելու նպատակով Զանջանի բանակի նոր հրամանատար է նշանակում Ադրբեջանի բանակի նախկին հրամանատար Մոհամմադ խանին, որի հետ Զանջան են ուղարկվում ռազմական նոր ուժեր[81]։

Տեղի են ունենում արյունահեղ նոր մարտեր, որի հետևանքով երկու կողմերն էլ տալիս են մեծ թվով զոհեր։ Ըստ Ատրպետի, այդ մարտում բաբիների կանայք իրենց ամուսինների հետ միասին պատերազմում էին հանուն ազատության ու հավասարության։ Դրանցից էր Ռոսթամ Ալի անունն ընդունած, տղամարդու շորեր հագած հերոսուհին, որի երևալը սարսափ էր սփռում և շանթահարում էր բոլորին[82]։

Բանակի հրամանատարները համոզվելով, որ ուժի միջոցով չեն կարող հասնել իրենց նպատակին, պաշարում են քաղաքի այն մասը, որտեղ գտնվում էին բաբիները։

Մեծ ուժերի հարձակումը (կառավարական զորքերի թիվն արդեն հասնում էր 30 հազարի)[83] վերջիններիս ստիպում է ետ քաշվել, ամրանալ քաղաքի թաղամասերից մեկում։

Մոլլա Մոհամմադ Ալին փրկության ելք որոնելու նպատակով 1850 թ. սեպտեմբերին նամակ է գրում պրեմիեր մինիստրին, պահանջելով վերջ տալ արյունալի սպանդներին։ Նա առաջարկում է շահի և ամիր Նեզամի ներկայությամբ գումարել հրապարակային բանավեճ բաբիների առաջնորդների և հոգևորականության բարձրաստիճան մոջթահեդների միջև[84]։ Սակայն առաջարկությունը մերժվում է։

Ուշագրավ են բաբիների շարժումների վերաբերյալ աղբյուրների վկայությունները այն մասին, որ բանակի բազմաթիվ սպաներ և զինվորներ հրաժարվում էին կռվել բաբիների դեմ։ Նրանցից էին գեներալ Քաղեմ խանը և մի շարք այլ սպաներ ու շարքայիններ։ Այդ մասին իրազեկ դառնալով՝ կենտրոնն անմիջապես կարգադրում է նրանց փո-

---

[81] ناسخ التواريخ، تاريخ قاجاريه، جلد سيم թերթ 44 բ։

[82] Ատրպետ, *Իմամաթ*, էջ 74։

[83] *Նույն տեղում*, էջ 75։

[84] کتاب نقطة الکاف، ص ۲۳۳

խադրել մայրաքաղաք, որտեղ միրզա Թաղի խանի հրամանով գնդակահարում են բոլորին[85]։

1850 թ. նոյեմբեր ամսին Զանջանի բանակը կրկին համալրվում է թարմ ուժով, որն ուներ հրետանային ջոկատ։ Երկարատև ռմբակոծումներից հետո, դեկտեմբերին, բանակն սկսում է լայն ճակատով հարձակում. բաբիները մեծ կորուստներ են ունենում և նահանջում[86]։

Բաբիները որոշում են անցնել հարձակման և ճեղքել թշնամու պաշարումը, սակայն նրանց այդ վերջին փորձը նույնպես խափանվում է։ Մոհամմադ Ալին ծանր վիրավորվում է և երեք օր անց՝ մահանում[87]։

Այդ դժվարին օրերին բաբիները, որոնց թիվը հասնում էր 100-ի, հերոսաբար մարտնչում էին 30.000-անոց[88] կանոնավոր բանակի դեմ։ Դեկտեմբերի վերջերին Դին Մոհամմադը և կենդանի մնացած բաբիական այլ առաջնորդներ ստիպված նամակ են ուղարկում իշխանություններին ու հայտնում, որ պատրաստ են անձնատուր լինել՝ պայմանով, որ իրենց թույլատրվի անարգել հեռանալ քաղաքի սահմաններից։

Այստեղ ևս, ինչպես Մազանդարանի ապստամբության անկման շրջանում, իշխանությունները երդվում են Ղորանով, որ բաբիներին ոչ մի վտանգ չի սպառնա, եթե նրանք անձնատուր լինեն և հանձնեն զենքերը։ Ինչպես գրում է Ատրպետը, բաբիները համոզված էին, որ իշխանությունները չեն հարգելու իրենց երդումը, սակայն ստեղծված անելանելի վիճակը, վերահաս ձմռան ցուրտը, մթերքի սպառումը ստիպեցին նրանց անձնատուր լինել։ Թշնամիները անխնա կոտորեցին այրերին, մանուկներին ոտքերի տակ տրորեցին, ծնողներին սրերի ցցեցին, զարհուրելի տանջանքների ենթարկելուց հետո գերեցին մանկահաս աղջիկներին, տղաներին ու կանանց[89]։

Իրանի իշխանությունները, ժողովրդին սաստելու նպատակով, բաբիների երեք առաջնորդներին՝ Սոլեյմանին, հաջի Քազեմին և սեյեդ Ռամազանին պատժեցին՝ թնդանոթների բերանին կապելու և կրակելու եղանակով[90]։

Այսպիսով, ճնշվեց նաև Զանջանի համաժողովրդական-հակաֆեո-

---

85 Tarikh-i-Jadid, p. 151.

86 ناسخ التواریخ· تاریخ قاجاریه· جلد سیم թերթ 45 բ։

87 Նույն տեղում, թերթ 46բ։

88 Ակներևաբար այդ թիվը չափազանցված է։

89 Ատրպետ, Իմամաթ, էջ 75։

90 *М. Иванов*, Бабидские восстания в Иране, стр. 120.

*դալական ապստամբությունը, որի ընթացքում, համաձայն պաշտոնական աղբյուրների, զոհվեցին 3000 բաբիներ[91]։*

**Յազդի ու Նեյրիզի ապստամբությունները:** *Դեռ չէր ավարտվել Զանջանի ապստամբությունը, երբ Յազդում սեյեդ Յահյա Դարաբիի գլխավորությամբ բռնկվեց բաբիների մի նոր ապստամբություն։*

*Յազդի քաղաքապետ Աղա խանը իրազեկ դառնալով Դարաբիի հակապետական գործունեությանը, կարգադրում է ձերբակալել նրան։ Այդ կարգադրությունը խափանելու նպատակով Դարաբիի հետևորդները ապստամբում են և զենքի միջոցով ձախողում այն։ Բաբիները հարձակվում են բերդի վրա, որտեղ հակահարված ստանալուց հետո փակվել էին զինված ջոկատները։ Այդ հարձակման ընթացքում զորամասերը կրում են մեծ թվով կորուստներ, իսկ քաղաքապետը անհաջեկված փախուստի է դիմում։*

*Այս իրադարձությունները սարսափեցնում են հոգևորականությանը, որը կառավարությունից պահանջում է նոր ուժեր ուղարկել, որոնց օգնությամբ հարձակվում են սեյեդ Յահյայի հետևորդների վրա և ջախջախում նրանց։ Վերջիններս սեյեդ Յահյայի հետ ստիպված են լինում Յազդից հեռանալ Ֆարս։*

*Ինչպես հայտնում է միրզա Ջանին, այստեղ ևս, ինչպես Զանջանի ապստամբության պարտությունից հետո, գերիների նկատմամբ վարվում են դաժանաբար։ Կենդանի մնացած բաբիներին կապում են թնդանոթների բերաններին և կրակում[92]։*

*Այդ պարտությունը չի հուսալքում սեյեդ Յահյային։ Նա Ֆարսից անմիջապես անցնում է Նեյրիզ՝ իր մշտական բնակավայրը։ Ճանապարհին ամենուրեք քարոզում է Բաբի վարդապետությունը, որի շնորհիվ մինչև Նեյրիզ հասնելը նրան է միանում մոտ 500 մարդ[93]։*

*Նեյրիզում այդ ժամանակ իշխում էր Զեյն օլ Աբեդին խանը։ Վերջինիս դաժանությունն այնպիսի զայրույթ էր առաջացրել բնակչության, հատկապես, գյուղացիության մեջ, որ նրանք անհամբեր սպասում էին մի փոքր առիթի, պայքարի դուրս գալու համար։*

*1850 թ. հունիսին, երբ Դարարին հասնում է Նեյրիզ, նրան են միանում մեծ թվով բաբիներ։ Այդ իրադարձություններից զգաստացած, տեղական իշխանությունները նահանգի կենտրոն Շիրազից շտապ օգ-*

---

[91] The Encyclopaedia of Islam, New ed., Vol. 1, London, 1960, p. 847.

[92] کتاب نقطة الکاف، ص ۲۲۴

[93] ناسخ التواريخ، تاريخ قاجاريه، جلد سيم *Թեհր 57 թ.*

նություն են խնդրում։ Բաբիներն օգտվելով խառը դրությունից, գրավում են քաղաքամերձ բերդը և ամրանում այնտեղ։ Մի գիշեր նրանք դուրս են գալիս ամրոցից և հարձակվում թշնամու վրա՝ պատճառելով մեծ զոհեր։ Այդ հաղթանակը մեծ համբավ է բերում սեյեդ Յահյային։ Միրզա Սեփեհրը հաղորդում է, որ այդ օրերին Նեյրիզում բաբիների թիվը հասնում էր 2000-ի[94]։

Այդ ժամանակ Շիրազ է ժամանում նոր նահանգապետ Ֆիրուզ խանը։ Վերջինիս հրամանով նահանգի տարբեր քաղաքներում կազմվում են մեծ թվով ուժեր և ուղարկվում Նեյրիզ։

Նեյրիզ հասնելուն պես կառավարական ուժերը շրջապատում են բաբիների գրաված բերդը և սկսում ռմբակոծել այն։ Բաբիները պաշարումից դուրս գալու նպատակով, կատարում են գիշերային մի քանի հարձակում։ Սակայն այդ հարձակումներն անցնում են անհաջող ու ձախողվում են։

Բաբիների հարձակումների անհաջողության պատճառը զենք չունենալն էր։ Զինված լինելով միայն սրերով ու դագանակներով, այդ հարձակումների ժամանակ բաբիները մեծ կորուստներ ունեցան։ Այդ իսկ պատճառով սեյեդ Յահյան դիմում է մերձավոր գյուղերի բնակչությանը և նրանցից օգնություն խնդրում[95]։ Երբ գյուղացիների օգնությամբ բաբիների շարքերը բավականաչափ համալրվում են, նրանք կրկին սկսում են իրենց գրոհները, սակայն նրանց չի հաջողվում ճեղքել պաշարումը։

Բանակի հրամանատարությունը այստեղ ևս կիրառելով նույն խաբեբայական գործելակերպը, սեյեդ Յահյային առաջարկում է հաշտության բանակցություններ վարելու համար դուրս գալ ամրոցից, նրան խոստանալով ապահովություն։ Հավատալով խոստումներին՝ սեյեդ Յահյան դուրս է գալիս բերդից և սպանվում։

Բերդում գտնվող բաբիները իրազեկ դառնալով այդ սպանությանը, դիմում են փախուստի, որի ժամանակ նրանց մեծամասնությունը կոտորվում է[96]։

Նեյրիզի քաղաքապետ Զեյն օլ Աբեդինը չբավարարվելով այդքանով, դատաստան է տեսնում բոլոր բաբիների, մինչև իսկ ոչ բաբիների հետ[97]։

---

94 Նույն տեղում։

95 روضته الصفاء، جلد دهم թերթ 67 բ։

96 ناسخ التواريخ، تاريخ قاجاريه، جلد دهم թերթ 58 բ։

97 Ասրպետ, Իմամաթ, էջ 71։

Այսպիսով, Նեյրիզի առաջին ապստամբությունը պարտվում է։

Իշխանությունների կողմից բաբիների արյունահեղ դաժան ջարդերը մեծ զայրույթ են առաջացնում, որից շուտով նոր ապստամբություն է բռնկվում։ Այս անգամ ապստամբներն իրենց ընտանիքների հետ բարձրանում են մոտակա լեռները։ Կենտրոնից նոր ուժեր ստանալով՝ կառավարական զորքերը նորանոր հարձակումների են դիմում։ Բայց նրանց այդ բազմաթիվ հարձակումները մատնվում են անհաջողության։ Ինչպես հաղորդում են պատմական աղբյուրները, այդ ժամանակաշրջաններում կառավարական զորքերի թիվը հասնում էր 10.000-ի, որոնք իրենց թնդանոթներով ռմբակոծում էին ապառաժները, այրերն ու անտառները։ Բորբոքված բաբիներն անվերջ իջնում էին լեռներից, հարվածում կառավարական ջոկատներին, ապա հափշտակելով թշնամու վառոդը, զենքերը, ուտելիքը, վերադառնում էին լեռները[98]։

Իշխանություններն այդ դրությունից դուրս գալու նպատակով դիմում են լեռնային ցեղերի օգնությանը և պահանջում պաշարել լեռները և ոչնչացնել բաբիներին։

Բաբիները շուտով ընկնում են պաշարման մեջ, և օրեցօր վատթարանում է դրությունը, սպառվում զինամթերքը, և նրանք սկսում են անհաջողություններ կրել։ Վերջապես, զորքերին հաջողվում է լրիվ ջախջախել բաբիներին և դատաստան տեսնել նրանց հետ, որն իր դաժանությամբ գերազանցում է բաբիների նախկինում տեղի ունեցած բոլոր ջարդերին[99]։ Ըստ Ատրպետի, բաբիների գերի ընկած առաջնորդներին տեղափոխում են Ֆարս նահանգի տարբեր քաղաքներ, որպեսզի հոգևորականությունը և պետական պաշտոնյաները ականատես լինեն բաբիների նկատմամբ կիրառած դատաստանին։ Նեյրիզի իշխանությունները զարհուրելի տանջանքների ենթարկելով՝ Շիրազ են բերում երեխաներին, կանանց և աղջիկներին, զինվորներն իրենց նիզակների ծայրերին ցցած տանում են քաջ բաբիների գլուխները[100]։

Նեյրիզի ապստամբությունը բաբիների վերջին համախմբված ելույթը եղավ։

Այնուհետև, ինչպես հայտնում են աղբյուրները, բաբիական աղանդի կենդանի մնացած առաջնորդները 1852 թ. Իրանի տարբեր վայրերից

---

98 **Ատրպետ**, *Իմամաթ, էջ 71, նաև՝* Tarikh-i-Iadid, p. 128.

99 *М. Иванов,* Бабидские восстания в Иране, стр. 126.

100 **Ատրպետ**, *Իմամաթ, էջ 71—72։*

մեկնում են Թեհրան և ծրագրում տեռորի ենթարկել շահին, գրավել Թեհրանի բերդը, գանձատունը և զինանոցը[101]։

Տեղեկանալով, որ օգոստոսի 16-ին շահը գնալու է որսի, տաս բաբիներ ատրճանակներով զինված թաքնվում են նրա ճանապարհի վրա։ Նրանցից երեքը պետք է հարձակվեին շահի վրա և սպանեին վերջինիս։ Սպանությունը կատարում է զանջանցի Սադեղը, որը հանրագիր հանձնելու պատրվակով մոտենում է շահին և մի քանի անգամ կրակում նրա վրա։ Մյուս երկու տեռորիստները նկատելով, որ շահը չսպանվեց, հարձակվում են նրա վրա, վայր գցում ձիուց և փորձում դաշունահար անել։ Սակայն այդ նրանց չի հաջողվում, քանի որ օգնության է հասնում շահի շքախումբը։

Բաբիների ձեռնարկած այդ անհաջող մահափորձից հետո ամբողջ Իրանում, հատկապես Թեհրանում, սկսվում է բոլոր բաբիների ձերբակալումը և արյունալի պատիժներ։

Բացի Բահաօլլահից, որն օտարերկրյա գաղութարարների ներկայացուցիչների միջնորդությամբ ազատվում է բանտից և անարգել հեռանում Իրանի սահմաններից, մնացած բոլոր բաբիները տանջամահ են արվում։

Պատասխանատվությունը միայն իր վրա չվերցնելու նպատակով շահը կարգադրում է արյունալի ակտին մասնակից դարձնել բոլոր վեզիրներին, ընդհանրապես քաղաքի բոլոր ունևոր և անվանի անձանց։ Բարձր հոգևորականությունն իր հերթին հրաման է արձակում և բաբիների սպանությունը հայտարարում սրբազան գործ։ Մահապատժի ենթակա 28 բաբիներին բաժանում են արքունիքի վեզիրների, մոջթահեդների և այլ անվանի անձանց միջև[102]։ Նրանք հաջի Սոլեյման խանի, Նեյրիզեցի Ղասեմի և ղոմեցի մոլլա Ֆաթհլլահի մարմինները ծակոտում են դաշույններով, ծակերի մեջ մոմեր խրում և վառում, որից հետո նստեցնում են ավանակների վրա, մունետիկներով և դհոլ-զուռնայով ման են ածում մայրաքաղաքի փողոցներում[103]։

Ինչպես գրում է Ատրպետը, այդ հրեշային տանջանքների մատնված հաջի Սոլեյման խանը առանց հառաչելու, անտրտունջ և անվհատ առաջ էր գնում և երբեմն ավանակից ցած գալով, մարմնից վար թափված

[101] «روضة الصفاء، جلد دهم», թերթ 83 ա։
[102] «ناسخ التواريخ احوالات صدراعظم», թերթ 32։
[103] Նույն տեղում, թերթ 33։

*մոմերը նորից խրում էր մարմնի մեջ[104]։ Թեհրանի ողջ բնակչությունը փողոց դուրս թափված՝ դիտում էր այդ տեսարանը։*

*Վերջապես, Սուլեյման խանին և նրա համախոհներին տանում են քաղաքի դարպասներից դուրս։ Այստեղ նրանց սպանում են դահիճները, որոնք կտրատում են նրանց մարմինները և գլխատում[105]։*

*Մեհդի Մալեք զադեն անդրադառնալով այդ վայրագ իրադարձություններին, գրում է հետևյալը։ Սպահանում բարձրաստիճան պաշտոնյաները և հոգևորականությունը որևէ թշնամանքի դեպքում անմեղ մարդկանց զրպարտում էին Բաբի հետևորդ լինելու մեջ և սկսում թալանել վերջինիս ունեցվածքը։ Քաղաքի բաբիները, այդ թվում և ազատախոհ անձինք, որոնց թիվը հասնում էր 800-ի, հարկադրաբար, ըստ Մալեք զադեի, «միգուցե հիմարաբար», իրենց կյանքը փրկելու նպատակով, ներխուժում են ռուսական հյուպատոսարան և «ապաստան» գտնում այնտեղ։ Այդ քայլն առիթ է տալիս բարձրաստիճան հոգևորականությանը ոտքի հանել քաղաքի և նրա մերձակա գյուղերի տարրերին և դագանակներով ու կոպալներով հարձակվել ռուսական հյուպատոսարանի վրա և շրջապատել այն։ Այնուհետև, հյուպատոսարանում «ապաստանածների» ճակատագիրը որոշելու համար մի քանի հանդիպումներ են կայանում ռուսական հյուպատոսի, նահանգապետ Զել էլ Սոլթանի և մոջթահեդների միջև։ Սրանից հետո ռուսական հյուպատոսը հավաստիացնում է, որ համաձայնություն է կայացվել հյուպատոսարանում գըտնըվող բաբիներին անվտանգ թողնելու մասին, պայմանով, որ վերջիններս կամավոր հեռանան ապաստարանից։ Վստահելով հյուպատոսին, նրանք գիշերը դուրս են գալիս հյուպատոսարանից։ Ապա տեղի է ունենում այն եղելությունը, որը, ըստ Մալեք զադեի «նույնիսկ գրիչն է ամաչում նկարագրել»[106]։ Հոգևորականները սրի են մատնում նրանց։*

*Այսպես ճնշվեց XIX դ. 40-ական թվականներին Իրանում բռնկված բաբիական հերոսական շարժումը, որը Իրանի հեղափոխական շարժումների պատմության մեջ ամենանշանակալից շարժումներից մեկն է։*

*Այդ ապստամբության ընթացքում, ըստ պաշտոնական տվյալների, սպանվեցին մոտ 20.000 բաբիներ[107]։*

---

104 Աստղյեռ, *Իմամաթ*, էջ. 91։

105 ناسخ التواریخ احوالات صدراعظم، *թերթ 33*։

106 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ١٦٦–١٦٧

107 The Encyclopaedia of Islam, New ed., vol. 1, p. 847.

О. Л. ПАХЛЕВАНЯН

# ВОССТАНИЕ БАБИДОВ В ИРАНЕ В СЕРЕДИНЕ XIX В.

**Резюме**

В середине XIX в. в Иране беспрецедентно усилилось проникновение и влияние европейских держав. Как логическое последствие созданной в Иране ситуации, в стране возникли и распространились мощные народные восстания. Среди них крупнейшим и важнейшим является бабидское восстание 1848—1851 гг., которое имело ярко выраженное антифеодальное и антиколониальное направление и которое было жестоко подавлено реакционными властями.